11703

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«16» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 240-25

Նախաձեռնող՝ ***«Նանատ» ՍՊԸ***
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շրջանային փ., փ. 76

Գործունեությունը՝ ***Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի (ԱԿԽ) հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասում 2025-2026թթ ընթացքում երկրաբանական ուսումնասիրություն***
Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք

Առդիր՝ 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 240 - 25

«16» հոկտեմբեր **2025թ.**

Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի (ԱԿԽ) հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասում 2025-2026թթ ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՆԱՆԱՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/ ծրագիր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Եղեգնուտ բնակավայր

Ներածական մաս. «ՆԱՆԱՏ» Ընկերությունը նախատեսում է իրականացնել Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի (ԱԿԽ) հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն 2025-2026թթ ընթացքում: Աշխատանքների ամբողջական կատարման արդյունքում ակնկալվում է ավազակոպճային խառնուրդի արդյունաբերական նշանակության պաշարների հաշվարկում, տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատում:

Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

«ՆԱՆԱՏ» ՍՊԸ կողմից հայցվող տարածքը կազմում է մոտ 21.63հա, այն գտնվում է համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության երկու հողամասերի սահմաններում, որոնք տրված են վարձակալությամբ ընկերությանը՝ (ծածկագիր՝ 04-039-0063-0051 և 04-039-0063-0052, հողատեսքը՝ այլ):

Նկարագրական մաս. Երկրաձևաբանական տեսակետից «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի արևմտյան մասը կազմող հարթավայր: Բարձրությունը տատանվում է 820-1000մ-ի սահմաններում, բուն տեղամասի տարածքը՝ մոտ 840-845մ: Տեղամասից 350-400մ դեպի հյուսիս անցնում է S-3-50 մարզային նշանակության ճանապարհը, նվազագույնը 10մ դեպի հարավ գտնվում է կիսաբանդ բետոնե ջրատար, մոտակա արտադրական-գյուղատնտեսական նշանակության շենք-

շինությունները գտնվում են նվազագույնը 10մ հեռավորությամբ, այգեգործական հողամասերը՝ 30-50մ հեռավորությամբ, դեպի արևմուտք նվազագույնը 20մ հեռավորության վրա գտնվում է ջրատար, 50մ հեռավորությամբ էլ. հոսանքի գծեր, նվազագույնը 10մ հեռավորությամբ հյուսիսային հատվածից, արևմուտքից և հարավից անցնում են գրունտային ճանապարհներ, 30մ հեռավորությամբ գտնվում է ոռոգման ջրի պոմպակայան:

Ուսումնասիրվելիք տեղամասը գտնվում է Արարատյան իջվածքում, որի ծալքավոր հիմքը ծածկված է միոցենի-պլիոցենի և հոլոցենի հասակի կավերով, ալևրոլիտային կավերով ու խայտաբղետ մոլասային ֆացիաներով: Այս ապարները ծածկված են ստորին չորրորդականի ցամաքային և լճային նստվածքներով, որոնք էլ իրենց հերթին ծածկվում են Արաքս գետի ժամանակակից բերվածքներով: Տեղամասի և հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել:

Հետախուզման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական, ջրաերկրաբանական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը և այլն: Օգտակար հանածոյի նյութական, հատիկային կազմը և տեխնոլոգիական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է ԱԿԽ զանգվածից ակոսային և համախառը նմուշների վերցնում: Օգտակար հաստվածքի նմուշարկումը հետախուզահորերից նախատեսվում է ակոսային նմուշների միջոցով:

Տեղանքի հարթ ռելիեֆի և տարածքի անբավարար մերկացվածության պայմաններում տեղամասի հետախուզումը նախատեսվում է իրականացնել հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերով նախատեսվում է որոշել ԱԿԽ զանգվածը ծածկող հողաբուսական և կավային բերվածքային շերտի և ԱԿԽ-ի հզորությունը: Ծածկող ապարների միջին հզորությունը սպասվում է 2 մ սահմաններում՝ տեղամասի եզրային մասերում և 0-0.5 մ՝ տեղամասի ոչ եզրային մասերում: Հետախուզահորերի կտրվածքը նախատեսվում է 1.6 մ², քանակը՝ 31 հոր: Նախատեսվող խորությունը՝ 6-10 մ, միջինը՝ 8 մ, ընդամենը՝ մոտ 248 գծ.մ.:

Հետախուզահորերը կանցվեն CAT 326-07 մակնիշի էքսկավատորի միջոցով, որը համալրված է ընդհանուր 18 մ երկարությամբ թևերով և շերեփով: Հորերի անցման ժամանակ նախապես կառանձնացվեն առկա հողաբուսական շերտը և դրա ներքևում տեղադրված կավավազային շերտը, որոնք կօգտագործվեն փորվածքի նմուշարկումից և հանված լեռնային զանգվածի հետլցնումից հետո հորերի մակերեսների վերականգնման համար: Թվով 31 հետախուզահորերի ընդհանուր մակերեսը կկազմի՝ 49.6 մ²:

Փորվածքներից ընդհանուր հեռացման ենթակա ապարների ծավալը կկազմի 393.6 խմ դելյուվիալ կավավազային զանգված և ԱԿԽ:

Հայցվող տարածքի կոորդինատները ըստ ArmWGS-84 համակարգի՝

Հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատները

Հ/Հ	Կոորդինատները	
	Y	X
1	4439117,2363	8428280,9696
2	4439097,7025	8428508,2256
3	4439274,1205	8428743,5406
4	4439293,4045	8428746,2256
5	4439348,0965	8428901,6016
6	4439426,0248	8428987,9480
7	4439420,1534	8429005,6447
8	4439273,1314	8428995,2577
9	4439278,0725	8429049,7766
10	4439118,2854	8429061,5985
11	4439108,1438	8428970,2959
12	4439071,6651	8428801,7475
13	4438906,7465	8428705,6242
14	4438748,6200	8428298,4400
15	4438861,0605	8428294,0648
16	4438946,5395	8428334,9825
17	4439027,2068	8428286,4368

Պատճառաբանական մաս. Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում որոշակի ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա: Մասնավորապես՝ էքսկավատորի, մեքենաների տեղաշարժի, մակերևութային հետախուզական փորվածքների անցման ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի աննշան արտանետում մթնոլորտային օդի վրա: Փոշեգոյացում չի լինելու, քանի որ ԱԿԽ զանգվածի մակերևույթը մշտապես գտնվում է խոնավ վիճակում:

Արաքս և Մեծամոր գետերը հոսում են տեղամասից ավելի քան 5.5կմ հեռավորությամբ, հետևաբար, հայցվող տարածքում իրականացվելիք աշխատանքները որևէ կերպ չեն ազդելու գետերի ջրերի որակի և քանակի վրա: Տեղամասի տարածքում, ըստ նախնական դիտարկումների, գրունտային ջրերի հորիզոնները սպասվում են 2-4մ խորության վրա: Տեղամասի հիդրոերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, այդ թվում նաև գրունտային ջրերի որակի և մակարդակի վերաբերյալ տվյալները կուսումնասիրվեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում: Մակերևութային հետախուզական փորվածքների անցման արդյունքում խախտվելու է տարածքի մակերևույթը՝ մոտ 49.6մ^2 ընդհանուր մակերեսով:

Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են փորվածքների հետլցնում, մակերեսների ամրացման և ռեկուլտիվացման աշխատանքներ:

Նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում տեղամասի տարածքում ընդերքօգտագործման արտադրական թափոնների օբյեկտ չի առաջանալու, աշխատանքների ընթացքում առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ (օրական 10կգ-ից ոչ ավել), որը ներկայացված է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից և պոլիմերներից:

Հայցվող տարածքում վտանգված էկոհամակարգեր, բնության և պատմամշակութային հատուկ պահպանվող տարածքներ չեն հայտնաբերվել:

Հանրային երկրորդ լսման վերաբերյալ ծանուցումը իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կազմակերպելով հանրային լսումը: Նախատեսվող գործունեությունը համայնքի և շահագրգիռ հանրության կողմից ստացել է դրական արձագանք: Ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսունասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ:

** Երկրաբանահետախուզական աշխատանքների համար տրված սույն եզրակացությունը չի կարող հիմք հանդիսանալ հետագայում Ընկերության կողմից ներկայացվող արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության ստացման համար:*

Փորձաքննական պահանջներ

- Նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 781-Ն որոշմամբ, սահմանված դեպքերում իրականացնել ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումները:
- Ապահովել մշտադիտարկումների իրականացումը՝ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն:
- Ապահովել դաշտային աշխատանքներից անմիջապես հետո փորվածքների ռեկուլտիվացիան, տարածքի կենդանական աշխարհի տեղաշարժը չխոչընդոտելու համար:
- Տարածքում առկա ջրատարների նկատմամբ ապահովել Կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջները:

Եզրափակիչ մաս

Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի (ԱԿԽ) հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասում 2025-2026թթ ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան